

ստորեւ, առնելով Նոր Զուղայի Հաւաքման թիւ 477 մագաղաթեայ Աւետարանէն (թղ. 2բ)․

«Ըստացողին, պարոնաց պարոն Զալալ Բէկին,

Եւ ընտանեացն իւրոց բնաւին,

Եւ հաւրն իւրոյ պայագատին,

Խաւջա Սափար բարեբաստին,

Մօրն իւրոյ Սաւլթանփաշին,

Լուսով լցուի իւրեանց հոգին :

Այլ եւ եղբարք իւր նագելի,

Որ ի հասակս երեք տասին,

Փոխի առ տէրն իւր ցանկալին :

Ապա երկրորդ եղբայր սորին,

Խօջայ Ֆոանգուլն գովելին,

Նաեւ երրորդ եղբայր սորին,

Խաւջայ Սուլթանն բաղձալին․

Եւ Զալալ Բէկն՝ ստացող սորին,

Կրտսերագոյն քան զնոսին,

Բայց հանճարով լի եւ անթերին,

Առատամիտ յոյժ գովելին :

Այլ եւ պապուն իւրեանց մեծին,

Իշխանաշուք Աղա Խաչկին․

Իւրեանց հանիկն հեգահոգին,

Խոնարհամիտ Մարիամին :

Եւ հաւրեղբայր Զալալ Բէկին,

Պարոն Նագար մեծ խաւջային․

Այլ եւ Պարոն Սինան Բէկին,

Որ վաղճանի տղայ հասակին :

Այլ եւ որդիք Մէլիք աղին,

Պարոն Մուքէյլն ընդ Խաչկիին,

Սինան, Բագումն, Սօլթանփաշէն,

Մնան անփորձ հաղբից չարին :

Նոյն եւ որդիքն Ֆոանգուլին,

Բարայն ընդ Մէլիքնիազին,

Մուսէս Մուղամն ընդ Մարիամին,

Յերկար ամօք ոչ սասանին :

Այլ եւ որդիք Սուլթանումին,

Սափար, Վալաթն ընդ Լէլումին,

Լիով աւուրբք ասդէն անին․

Մինչեւ որ գորդիս որդոց տեսցին :

Զոր եւ տացէ տէր Զալալին,